375:373
Տ-29

# ՏԵԽՆԻԿՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ

# ԾՐԱԳՐԵՐԸ

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
անվան

ԱՐՀԼՈՒՍԳԼԽՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Երեվան—1929

ՊԵՏՀՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ
ՅԵՐԵՎԱՆՈՒՄ
Պատ. № 634. Հրատ. №
Գրառեպվար № 2178 (բ)
Տիրաժ 1500

375.
S-29
06 APR 2010
14462-57 3/4

# ԾՐԱԳԻՐ

## ՅԵՐԿՐԱՉԱՓՈՒԹՅԱՆ

Լրիվ գննական յերկրաչափություն, իսկ սիստեմատիկ կուրսից հետևյալը.

### Ներածություն.

Մաթեմատիկական առաջադրություններ սահմանումներ, աքսիոմներ, թեորեմներ՝ ուղիղ և հակադարձ, հետևանքներ։

### Հարթաչափություն (պլանիմետրիա)

Ուղիղի աքսիոմները և նրանցից բղխող հետևանքները։ Ուղիղ հատված։ Հատվածների հավասարությունը և անհավասարությունը։ Հատվածների գումարը և տարբերությունը։

### Անկյուններ.

Անկյան կողմերը և գագաթը։ Հավասար և անհավասար անկյուններ։ Անկյունների գումարը և տարբերությունը։ Կից անկյուններ։ Ուղիղ անկյուն, ուղղահայացի հիմքը, թեք և ուղիղ, բութ և սուր անկյուններ։ Թեորեմներ կից անկյունների մասին։ Հետևանքներ։ Հակադիր (վերտիկալ) անկյուններ՝ թեորեմներ հակադիր անկյունների մասին։

13 AUG 2013
53788

### Հարթ ուղղագծի պատկերներ.

Բազմանկյուն. պարագիծ: Յեռանկյուն: Յեռանկյունների բաժանումը: Յեռանկյան ամենագլխավոր գծերը: Հավասարասրունք յեռանկյան հատկությունները: Գաղափար համաչափության առանցքի մասին: Յեռանկյունների հավասարության հատկանիշները: Յեռանկյան անկյունների և կողմերի կախումը իրարից: Թեորեմ յեռանկյան արտաքին անկյան մասին. այս թեորեմի հետևանքը, թեորեմներ յեռանկյան հավասար և անհաասար կողմերի դիմաց գտնվող անկյունների մասին. Նրանց հակադարձ թեորեմներ, այդ թեորեմներից բղխող հետևանքները:

II

Յեռանկյան մեջ յուրաքանչյուր կողմը փոքր է մյուս յերկու կողմերի գումարից և մեծ՝ նրանց տարբերությունից: Ուռուցիկ բեկյալը կարճ է նրան ընդգրկող ամեն մի բեկյալից:

Յեռանկյուններ, վորոնք ունեն 2-ական համապատասխանաբար հավասար չեն: Ուղղահայաց և թեք գծեր. Նրանց մասին թեորեմներ: Ուղղանկյուն յեռանկյունների հավասարությունը: Ուղիղ հատվածի միջօուղղահայացի հատկությունը: Անկյան կիսողի հատկությունը: Յերկրաչափական տեղ. կառուցման հիմնական խնդիրները: Զուգահեռ ուղիղներ:

Հիմնական թեորեմներ: Համապատասխան զուգահեռ կամ ուղղահայաց կողմեր ունեցող անկյունների յեռանկյան և բազմանկյան անկյունների գումարը:

Զուգահեռակողմ, ուղղանկյուն (շեղանկյուն) և



քառակուսի: Այն թեորեմները, վորոնք արտահայտում են նրանց անկյունների կողմերի անկյունագծերի հատկությունները: Կենտրոնական համաչափություն: Հատվածի բաժանելը հավասար մասերի:

Թեորեմ յեռանկյան յերկու կողմերի միջնակետերը միացնող ուղիղի մասին: Թեորեմ տրապեցի կողմերի միջնակետերը միացնող ուղիղի մասին: Շրջագիծ, շրջան, շառավիղ, տրամագիծ, ուղիղ, լար, հատող և շոշափող գծեր, սեկտոր, սեգմենտ: Շրջագծի և ուղիղի ընդհանուր կետերի թիվը: Յերեք կետերի վրայով տանել շրջագիծ: Ուղիղների հավասարությունը և անհավասարությունը: Տրամագծի հատկությունները: Այն հարաբերությունը, վոր կա ուղիղների, նրանց ձգող լարերի և վերջինների հեռավորության մեջ կենտրոնից:

Թեորեմներ շոշափողի և շոշափման կետով տարած շառավղի մասին: Այն շոշափողի դրությունը, վորը զուգահեռ է լարին: Խնդիրներ տված շրջագծին կամ յերկու շրջագծերին տանել շոշափողներ:

Շրջագծերի հարաբերական դիրքը:

Մեծությունների չափումը:

Անկյունների չափումը ուղիղներով: Կենտրոնական անկյուն և նրա չափը: Անկյունաչափ: Ներգծած անկյան չափումը: Համապատասխան կառուցման խնդիրներ: Թեորեմներ այն անկյունների մասին, 1-ին, վորոնց գագաթները գտնվում են շրջանի մեջ (բայց վոչ կենտրոնում) 2-րդ, կամ շրջագծից դուրս, (կողմերը հատողներ են, կամ կողմերից մեկը կամ յերկուսը շոշափողներ են):

Ներգծած և արտագծած բազմանկյուններ:

*Արտագծել յեռանկյան շուրջը և նրա մեջ ներգծել շրջագիծ։ Ուռուցիկ ներգծած քառանկյան հակադիր անկյունների հատկությունը։ Ուռուցիկ արտագծած քառանկյան հակադիր կողմերի հատկությունը։*

**Նման պատկերներ.**

*Նման յեռանկյուններ։ Այն թեորեմները, վորոնք արտահայտում են յեռանկյունների նմանությունը։ Նման բազմանկյուններ։ Նման բազմանկյունների վերածումը նման յեռանկյունների։ Նման բազմանկյունների պարագծերի հարաբերությունը։ Նման դասավորված ձևեր։*

*Բոլոր անցածի վերաբերյալ հաշվելու խնդիրներ։*



# Ծ Ր Ա Գ Ի Ր

## ՀԱՆՐԱՀԱՇՎԻ

*ա.—Բնական թվեր և նրանց վրա գործողություններ։ Հավասարության և անհավասարնության նշաններ։*

*Ուղիղ գործողությունների հիմնական օրենքները. 1)* $a+в=+a$ *(տեղափոխման որննք) 2)* $(a+в)+c=a+(в+c)=a=в+c$ *(զուգորդական որենք. 3)* $a+в$։ $aв$ *միշտ իրենից ներկայացնում ե մի թիվ։ Հակադարձ գործողությունների սահմանումը։*

$a+в-в$, $a.в:в$ $\sqrt{a^2}$։ *Կոտորակ թվերի ծագումը (թվի ըմբռնման առաջի ընդարձակումը)։ Կոտորակ թվերի վրա չորս գործողություններ կատարելը։*

*Տառերի գործածության օգտակարությունը հանրահաշվում։ Հանրահաշվական արտահայտություններ՝ գործակից, աստիճան բարձրացնելը։ Միանդամ և բազմանդամ։ Նման անդամների միացնելը։ Հանրահաշվական արտահայտություններին թվական արժեքներ տալը։ Ինչ կարգով պիտի կատարել գործողությունները, յեթե փակագծեր չկան։ Փակագծերի գործածությունը և նրանց նշանակությունը։ Միանդամների և բազմանդամների վրա չորս գործողություն կատարելը։*

Գումարի և տարբերության քառակուսին.—

Գումարի և տարբերության արտադրյալը։ Նրանց յերկրաչափական բացատրությունը։ Պարզ հավասարումներ, պարզ հավասարումներով խնդիրներ կազմելը։

բ.—Հարաբերական թվեր։ Հարաբերական թվերի բազմապատկումը և բաժանումը. բացասական թվերի աստիճան բարձրացնելը, միանդամների և բազմանդամների բազմապատկումը։ Գումարի և տարբերության խորանարդը։

Կրճատ բազմապատկումներ ֆորմուլաներ միջոցով։ Բազմանդամների բաժանումը միանդամով, բազմանդամըրի բաժանումը միանդամով։

Տասնական սիստեմի թվարկությունը, ինչպես կանոնավոր դասավորված բազմանդամ։

Հավասարումներ—$2x=5$, $7x=-4,2$, $19-3x=14-8x$, բազմանդամների բազմապատկիչների վերածելը (մասնավոր դեպքեր)։ Հանրահաշվական կոտորակներ։ Հանրահաշվական կոտորակների կրճատումը։ Հանրահաշվական կոտորակների վրա չորս գործողությունները։ Մոտավոր ճշտությամբ գործողություններ կատարելը. դրանց գործածությունը յերկրաչափության մեջ և ֆիզիկայում (մակերեսների և ծավալների հաշվելը մոտավոր ճշտությամբ)։ Համեմատություններ, համեմատությունների տեսության գործածությունը։

գ.—Առաջի աստիճանի հավասարումներ։ Մի անհայտով առաջի աստիճանի հավասարումներ կազմելը։ Առաջի աստիճանի յերկու և ավելի անհայտներով հավասարումների վճռելը ա) գործակիցների հավասարման բ) արտածման ձևով վճռելը։ Յերկու և ավելի



անհայտներով հավասարումներ կամմելը, խառը խնդիրներ յերկրաչափությունից, ֆիզիկայից և այլ հարակից առարկաներից։

---

Թվաբանություն։ Թվաբանական գործողություններ ամբողջ թվերի հետ։ Չափեր։ Հասարակ և տասնորդական կոտորակներ։ Պարբերական կոտորակներ։ Հարաբերություններ և համեմատություններ։ Ուղիղ և հակադարձ համեմատություն։ Տոկոսներ։ Յերից կանոն։

# ԾՐԱԳԻՐ

## ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

1. Յոթնամյա դպրոցի լրիվ դասընթացքը.

2. Ընթերցանություն.—Ազատ և սահուն կարդալ, պատմել և վերլուծել գրվածքները՝ հասարակական, սոցիալական և գեղարվեստական տեսակետներից։

3. Քերականություն.— Ստուգաբանություն և համաձայնություն։

4. Քերականության տեսություն— վոճաբանություն, գիտելիքներ գրվածքների տեսակների մասին։

5. Գրականություն.—Համառոտ ծանոթություն արևելահայ գրողների մասին։

6. Գրավոր.—անսխալ (ուղղագրական տեսակետից) շարադրություններ, վերապատում, բնութագրություն. կյանքից վերցրած ինքնուրույն պատմվածքներ, նկարագրություն, հիշողություններ, տպավորություններ և այլն։

# Программа

## По русскому яз

1. Берлое правильное чтенне небольших стетей и рассказов.



2. Самостеятельная передеча прочитаннего.

3. Ответы на вопросы, поставленные преподавателем.

4. Знание наизусть стиховорений и басен, выученных раньше.

5. Письмеиное заполнение анкеты (отвеы на вопросы: где родился, когда· из кого состоит семья и. т. п.).

6. Грамматика—глагол, спражение глаголов.
Имя существительное. Родовые окончания.
Имена существител. с шипящей буквой на кенце.
Склонеие.
Снпнтаксис простого преджения.

7. Писъменные упражнения по грамматике.

# ԾՐԱԳԻՐ

## ՖԻԶԻԿԱՅԻ

### Նյութ.

*Նրա յերեք վիճակը.*

*Նյութի ընդհանուր հատկությունները.*

*Մետրական չափերի սիստեմ՝ յերկրաչափության, մակերեսի և ծավալի միավորներ, ծանրության միավորներ։*

### Տեսակարար կշիռ.

*Ջերմաստիճան և ջերմաչափ։*

### Ուժեր յեվ շարժում

*Արագություն, համաչափ շարժում. Նրա բանաձևը, մարմինների ընկնելը, հավասարաչափ շարժում։*

*Ուժեր և ուժերի չափումը. գաղափար ուժերի համազորի մասին։*

*Ծանրության կենտրոն. մի և մի քանի հենման կետ ունեցող մարմինների հավասարակշռությունը ծանրության ուժի ազդեցության տակ։*

*Հեղուկներ. Պասկալի օրենքը, Ջրաբաշխական մամուլ, հեղուկի ճնշումը անոթի, հատակի և պատերի վրա. Սեղների անիվը։ Հաղորդակից անոթներ։*



### Արխիմեդի օրենքը, լողացող մարմիններ.

*Գազեր. գազի ճնշումը. Պասկալի օրենքը գազի նկատմամբ։*

*Օդ. օդի քաշը, մթնոլորտի ճնշումը. Տորիչելլի փորձը, բարոմետրներ. Ջրահան ջրմուղ, պարզ սխեմներ։ Սիֆոն։*

*Բոյլ-Մարիոտի օրենքը։ Մանոմետրներ։*

*Արքիմեդի օրենքը գազերի նկատմամբ. Թռչող ապպարատներ։*

### Ջերմություն.

*Ջերմության տարածվելու յեղանակները։*

*Ջերմության քանակը, ջերմության միավորներ.*

*Հալում և յեռում. ճնշման ազդեցությունը հալման կետի և յեռման կետի վրա։*

*Հալման թագնված ջերմությունը. յեռման թագնված ջերմություն. գոլորշիացում։*

### Մագնիսականություն.

*Բնական մագնիս. Բևեռներ, նրանց փոխազդեցությունը։*

*Յերկաթի և պողպատի մագնիսականալը. արհեստական մագնիսներ։*

### Ելեկտրոստատիկա.

*Ապակու և խեժի ելեկտրականացումը, յերկու տեսակի ելեքտրականություն. ելեքտրականացած նյութերի. փոխազդեցությունը, ելեքտրական ճոճանակ, ելեքտրոսկոպ։ Լավ և վատ հաղորդիչներ, պարպում, մեկուսացում։ Տարբեր ելեկտրականություն-*

ների չեզոքացում։ Բացասական և դրական ելեկտրականություններ։

Ելեկտրականության դասավորումը հաղորդիչի վրա։

Սուր ծայրերի ազդեցությունը. շանթարգել։

Գալվանիզմ. գալվանական տարր. ելեկտրական հոսանք. Լեկլանշեյի և Դանիյելի տարրերը։

Գաղափար ելեկտրաշարժիչ ուժի, հոսանքի ուժի և ելեկտրական դիմադրության մասին։

**Ո մ ի  ո ր ե ն ք ը.**

Հոսանքի ջերմագործությունը, ելեկտրական ճրագ։

**Ելեկտրոմագնիսականություն.**

Ելեկտրոմագնիս. ելեկտրական զանգ. Մորզեի ապարատ։

---



# ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## I ՅԵՐԿՐԻ ՅԵՎ ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴ. ՏՆՏԵՍՈՒԹՅՈՐՆԸ.

## I ԽՍՀՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

1. Հողատիրություն և հողոգտագործում հացաբույսերի մշակույթ. տեխնիք. բույսերի մշակույթ, այգեգործություն և բանջարաբուծություն, անասնաբուծություն, թռչնաբուծություն, շերամապահություն, մեղվաբուծություն, անտառագործություն, Խ.Ս.Հ.Մ. Անդրկովկասյան Ֆեդերացիայի և Հայաստանի Ս.Խ.Հ. գյուղատնտեսական ռայոնիզացիա։

2. Խ.Ս.Հ.Մ. պետական արդյունաբերությունը։ Մասնավոր և ոտար արդյունաբերությունը և նրանց աննշան դերը։ Մանր արդյունաբերություն.— տնայնագործական և արդյունա-կոոպերատիվային։ Տեղական և կենտրոնական արդյունաբերություն։ Ժ.Տ.Գ.Խ. և նրա տեղական մարմինները։

**Գրականության I-ին կեսի.**

ա) Բորիսով. Տնտեսական աշխարհագրություն (բ-րդ գլ. գյուղատնտեսություն)

բ) Հ. Հովհաննիսյան. Համառոտ աշխարհագրություն

**Գրականություն 2-րդ կեսի**

ա) Բորիսով. Տնտեսական աշխարհագրություն. (Տնայնագործություն՝ 214—218 էջ)։

3. Մեր արդյունաբերության—ձեռք բերվող և մշակվող—ամենակարևոր ճյուղերը,—մետաղ, վառելիք, մեքենաների և հաղորդահցության միջոցների կառուցումը. ելեքտրաարդյունաբերության, մանվածային, քիմիական։ Գյուղատնտեսական հում նյութեր և սննդի մթերքներ։ Նախապատերազմյան դրություն և ուրիշ յերկիրների հետ համեմատություն։ Հայաստանի համար, պղնձաարդյունաբերություն, գինեգործություն, մանվածային արդյունաբերություն. Հայաստանի խորհրդային իշխանության իշխանության ջանքերը յերկրի ինդուստրիալիզացիայի գործում։

**Գրականություն**

ա) Բորիսով. Տնտեսական աշխարհագրություն, (4-րդ գլ. արդյունաբերություն)։

4. Խ. Ս. Հ. Մ. արդյունաբերության զանազան ճյուղերի աշխարհագրական դասավորությունն ըստ բնական և տնտեսական պայմանների։

**Գրականություն**

ա) Բորիսով. Տնտեսական աշխարհագրություն. (Ռայոնացում, տնտեսական ռայոններ 13—31 էջ)։

5. Փոխանակություն և շուկա։ Ճանապարհներ և հաղորդակցությար միջոցների դերը։



**Գրականություն**

ա) Բորիսով. Տնտեսական աշխարհագրություն. (հաղորդակցության ճանապարհներ 218—235. ներքին առևտուր՝ 238—243 էջ)։

6. Բանվոր դասակարգն է արդյունաբերական ապրանքների հիմնական արտադրողը։ Խ.Ս.Հ.Մ. բանվոր դասակարգի քանակն ու աճումը։ Հայաստանի բանվորության թվի աճումը, վորպես յերկրի ինդուստրալիզացիայի հետևանք։

## 2. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՐԳԸ ՅԵՎ Խ. Ս. Հ. Մ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ.

1. Խորհրդային իշխանության եյությունը։ Նրա տարբերությունը բուրժուական պետության կարգերից, (միահեծան, դեմոկրատիկ հանրապետական)։

2. Բանվորների և գյուղացիների միությունը, վորը կոփվել է Խ.Ս.Հ.Մ. սահմանադրությամբ։ Աշխատավորների իրավունքի դեկլարացիա։ Խորհրդային իշխանության սերտ կապը աշխատավորական մասսաների հետ։

**Գրականություն 1, 2, յեվ 3-րդ կեսի.**

ա) Բերդնիկով և Սվետլով.—Քաղաքական գրագիտության դասընթաց. (1-ին գլ. 8. Խորհրդ. իշխանութ. ու խորհրդ. հանրապ. կազմակերպ. 188—223 էջ. 2-րդ հավելված 1-ին Անգրկ. ՍՖԽՀ սահմանադրութ.)։

3. Խ.Ս.Հ.Մ. սահմանադրությունը վորպես խորհրդային պետության հիմնական օրենք։ Աշխատա-

14462-3714
ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Երևան
Публичная Биб

վորների ընտրական իրավունքները։ Խորհրդային իշխանության կազմակերպումը կենտրոնում և տեղերում։ Ժողովրդական կոմիսարիատներ և նրանց աշխատանքը։ Խորհրդային իշխանության քաղաքականությունը Խ.Ս.Հ.Մ. մեջ ապրող զանազան ազգությունների նկատմամբ։ Այդ քաղաքականության միջազգային (ինտերնացիոնալ) բնույթը։ Ինքնուրույն (ավտոնոմ) հանրապետություններ։ Խորհրդային սոցիալիստական Հանրապետությունների Միության Անդրկովկասյան Ֆեդերացիայի և Հայաստանի սահմանադրությունը։

### Մեր խնդիրները գյուղում

1. Գյուղատնտեսական գործունեյության բնական պայմանները և նրանց ազդեցությունը գյուղական տնտեսության բնույթի վրա։ Գյուղատնտեսական շրջանների մասին հասկացողություն։

### Գրականություն

ա) Բորիսով. Տնտեսական աշխարհագրություն (51—50 և 13—3ր եջ)

բ) Հ. Հովհաննիսյան. Համառոտ աշխարհագրություն։

2. Գյուղ. տնտես. ցած մակարդակը և բարձրացնելու ճանապարհները։ Հողաշինարարություն, ջրաշինարարություն, գյուղական տնտեսության մեքենայացումն։ Ելեքտրոֆիկացիայի նշանակությունը։ Կոոպերացիայի նշանակությունը գյուղական տնտեսության բարձրացման գործում։ Մասսայի ինքնոգնությունը և ինքնագործունեյությունը։ Պետական օգնություն։



3. Ծանոթություն տեղական գյուղացիական տնտեսության բարելավման ծրագրին։

### Ուսման 7-րդ տարի

### Համաշխարհային տնտեսություն

1. Սննդի և հում նյութի, հիմնական մթերքների, վառելիքի ու մետաղի՝ ձեռք բերելու, մշակելու ու պահեստների արտադրության—համաշխարհային ամենակարևոր կենտրոնների աշխարհագրական դասավորումը։ Աշխատանքի բաժանման բնական պայմանները։

2. Յերկրագնդի զանազան շրջանների տնտեսական կապը։ Յերկրագործական և ծանր արդյունաբերական յերկրները, իբրև համաշխարհային տնտեսության մասերը։

3. Սպառման առարկաների և արդյունաբերության միջոցների արտադրման համաշխարհային աճումը՝ տեխնիկայի զարգացման հետ կապված։

4. Ծանր արդյունաբերական ամենախոշոր յերկրները (Հ. Ամ. Միացյալ Նահանգները, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Գերմանիա, Ճապոնիան)։

Նրանց գաղութներն և նրանցից կախված յերկրները։ Խ. Ս. Հ. Մ.-ի տեղը համաշխարհային տնտեսության մեջ։

## 2. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱՐԳԸ ԻԲՐԵՎ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻՑ ՍՈՑԻԱԼԻԶՄԻՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԱՆՑՈՂԻԿ ՀԱՍԱՐԱԿԱՐԳ.

1. Տեխնիկայի զարգացման և արտադրական ուժերի աճումը։ Հակասությունների սրումը կապիտա-

*լիստական հասարակության ներսում։ Նա ընդունակ է տիրապետելու արտադրական ուժերի աճումը։ Իմպերիալիզմը։ Իմպերիալիստական պատերազմներ և արտադրակտն ուժերի անիմաստ վատնումը։*

*Պրոլետարիատ։ Նրա պայքարը։ Բուրժուազիայի անկումը և հեղափոխական շարժման աճումը անխուսափելի յեն։*

### Գրականություն 1-ին յեվ 2-րդ կետերի

*ա) Բերդնիկով և Սվետլով. Քաղ. գրագ. դաս. (1. կապիտալիզմի զարգացումը մինչև ֆրանսիական կապիտալի դարաշրջանը, 2. ֆրանսիական կապիտալըն ու իմպերիալիզմը, 3 պատերազմն ու կապիտալիզմի ճակատագիրը 20--91 եջ)։*

*բ) Տյումենեվ.—Աշխատանքի պատմություն։ Արտադրության համակենտրոնացում 142—148։ Իմպերիալիզմ 149—155 դասակարգային հակասությունների սրվելը 156—159։ Բանվոր դասակարգի քաղաքական կռիվը 166—173։ Արտադրության անիշխանություն 174—178)։*

*գ) Արտ. Կարինյան Իմպերիալիստական պատերազմը և Հայաստանը։*

*դ) » » Դաշնակցությունը փաստերի դեմ,*

*3. Արտադրության համայնացում։ Շահագործման վոչնչացումը, դասակարգերի և պետության անհետացումը։ Տնտեսության և աշխատանքի պլանաչափ (ծրագրված) կազմակերպումը։ Արտադրական ուժերի զարգացումը։ Կենցաղի և կյանքի ձևերի փոփոխումը։ Սոցիալիստական հասարակարգ։ Ապագայի կոմունիստական հասարակությունը։*



### Գրականություն

*ա. Բերդնիկով և Սվետլով.—Քաղգրագիտության դասընթաց (կոմմունիստական հասարակությունն ու անցման հասարակարգը, 136—162 եջ)։*

*բ. Տյումենև «Աշխատանքի պատմություն» (սոցիալիզմ, 178—184 եջ)։*

*4. Խորհրդային կարգն իբրև անցողական՝ սոցիալիզմին անցնելուն։ Տնտեսության գլխավոր ճյուղերի ազգայնացումը (խոշոր արդյունաբերություն, հող, հողագործության միջոցներ). Սոցիալիստական շինարարության «հրամայող բարձունքներ»։ Տնտեսության ծրագրումը։ Տնտեսության ծրագրման դժվարությունները մի յերկրում, ուր տիրապետողն է մանր գյուղացիական տնտեսությունը։*

*5. Կոոպերացիայի նշանակությունն ու դերը։ Կոոպերացիան դեպի սոցիալիզմ տանող իսկական ուղին է։ «Քաղաքակիրթ կոոպերատորների հասարակարգ»։*

### Գրականություն

*ա. կոոպերացիա և գյուղական տնտեսություն։*

*բ. Ժավորոնկով և Զյուբինսկի հետամնաց և անհատական գյուղացիական տնտեսություններից դեպի կոլլեկտիվ տնտեսություն։*

*6. Համաշխարհային տնտեսության և կապիտալիստական յերկրների հետ կապ ունենալու անհրաժեշտությունը։ Պայքար մեր տնտեսության անկախու-*

թյան համար։ Արտաքին առևտրի մենաշնորհը։ Ցերկրի ինդուստրալիզացիա։

7. Խորհրդային միությունը իբր համաշխարհային հեղափոխության մարտական ճակատ։ Բուրժուական ողակավորումը։ ԽՍՀՄ-ի պայքարը քաղաքական անկախության համար, Մեր արտաքին քաղաքականությունը իմպերիալիստական և ճնշված յերկրների նկատամամբ (Արևմուտքի և Արևելքի)։ Կարմիր բանակ։

8. Կուլտուրական բարձրացման աճումն ու անհրաժեշտությունը։ Կուլտուրական ճակատ։ Կյանքի ձևերի փոփոխումը։

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ Բ. ԱՍՏ. ԴՊՐՈՑԻ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ (ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ) ՀԱՄԱՐ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ

1. Ժավորոնկով և Զյուբինսկի.—Հետամնաց և անհատական գյուղացիական տնտեսությունից դեպի կոլեկտիվ տնտեսություն։
2. Լենինը և գյուղացիները.
3. ԽՍՀՄ գյուղատնտեսությունը.
4. Գործարանն ինչ եր տալիս գյուղին.
5. Բանվոր ու գյուղացիները.
6. Կոոպերացիա և գյուղական տնտեսություն.
7. Գյուղացու աշխատանքները.
8. Գյուղի հարուստներն ու չքավորները.



606

9. Քաղաք և գյուղ.
10. Խորհրդային իշխանությունը գյուղում.
11. Հ. Հովհաննիսյան.—Համառոտ աշխարհագրություն.
12. Հ. Ազատյան.—Թեզիսներ Հայաստանի խորհրդայնացման 5-րդ տարեդարձի առթիվ.
13. Բորիսով.—Տնտեսական աշխարհագրություն.
14. Բրեդնիկով և Սվետլով.—Քաղգրագիտության դասընթաց.
15. Արտ. Կարինյան.—Իմպերիալիստական պատերազմը և Հայաստանը։

Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Երևան
Публичная Биб...

ՀՀ Ազգային գրադարան
NL0226416

53.788